ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական վարչությունը, սույն թվականի օգոստոսի 7—17-ին Փարիզում գումարված իր նստաշրջանում, ընդառաջելով Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիմումին, միաձայնությամբ որոշեց ընդունել Հայաստանյայց Առաքելական եկեղեցին իբրև անդամ Եկեղեցիների Համաշխարհային կազմակերպության:

Այս առթիվ, եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը հանդիսավոր կերպով նշեց ու արձանագրեց, թե մեկ է և անբաժանելի Հայաստանյայց Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով, հոգևոր վերին իշխանությանը հերթ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի վերոհիշյալ ժողովին հանուն Հայաստանյայց Եկեղեցու Վեհափառ Հայրապետի կողմից ուղարկված պատվիրակությունը կազմված էր հետևյալ անձերից.

Գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյան, Հայրապետական պատվիրակ Արևմտյան Եվրոպայի և առաջնորդ Ֆրանսիայի հայոց:

Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան, առաջնորդ Վրաստանի հայոց.

Հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյան, հոգևոր հովիվ Մոսկվայի հայոց:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ